ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «28» 03 2025թ №91/Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 2381-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33–րդ և 34–րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 27-ի «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումների տեխնիկական հատկորոշումները հաստատելու մասին» N 2381-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-ին և 2.2-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված աշխարհագրական նշումով ապրանքների տեխնիկական հատկորոշումների դրույթների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահել «Էկոգլոբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2.2. Ապահովել սույն հրամանի 1–ին կետով հաստատված աշխարհագրական նշումով ապրանքների գրանցման նպատակով հայտերի ներկայացումն Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակ:»:

2) 3-րդ կետում «Ռ. Գևորգյանին» բառերը փոխարինել «Լիլյա Սիրականյանին» բառերով:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ